*Այլ և Հոգւոյն իւր էակցին*
*Փառք և պատիւ ի մէնջ տացին,*
*Երրորդութեանն միակին*
*Հայր և Որդի և Սուրբ Հոգին,*
*Որ ետ ինձ կար տըկար անձին*
*Եւ զեչն ու զնուն Հասոյց ի մին,*
*Բաժեալ զգանձերս որ ի միջին,*
*Եչն առաջին և նուն յետին։*

---

458—460. Եթէ այստեղ մի այլ փոխաբերական իմաստ չը կայ՝ օր. հեղինակի անուան վերաբերմամբ, թերևս «Յիշատակարանի» տողերի քանակութիւնն է ակնարկում Խլաթեցին Ե (5) և Ն (400) թուանիշ տառերով: Նման թուարկութիւն առաջ է բերում մեր հեղինակը իւր մի այլ գրուածքում՝ Սաղմոսի կանոնագլուխների, գուըղաների և տուների թիւը որոշելու առթիւ.

«Զիս ի չէչէ» հիմնարկեցին,
«Տարեալ ի հնձ» —արրէցին,
«Ութ խորանաւ զարդարեցին,
«Վաթսուն և չորս դուռն բարին....»։

(Տես Հ. Տաշեանի «Ցուցակը», էջ 644.)։